Արձանագրություն N 2

«ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	25.04.2016թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արտակ Պողոսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Կուլախսզյանը, Հասմիկ Իփեքչյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

«ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանը 25.04.2016թ. ժամը 11:00 «ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝

Չափաբաժնի N	Գնման առարկայի անվանումը	Գինը (ՀՀ դրամ)
1	2016թ. մայիսի 17-20-ը Աղվերանում արտագնա սեմինարի կազմակերպման ծառայություն	3000000 (երեք միլիոն)

2. Գնումները համակարգող Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել երկու մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

ա/ «Դրիմ Ռեսթ» ՍՊԸ – ք. Երևան, Ագանթագեղոսի 7, ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արզական, հեռ. 095 20 61 49, էլ. փոստ՝ info@arthurs-hotel.am:

բ/ «Հոթել Աղվերան» ՓԲԸ – Կոտայքի մարզ, գ. Արզական, Անտառային 1, հեռ. 091 22 40 54, էլ. փոստ՝ info@aghveranhotel.am:

3. Ուսումնասիրելով գնային առաջարկները, դրանցում գտնվող փաստաթղթերը և լրացնելով գնահատման թերթիկները (կցվում են)՝ հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

- **«Դրիմ Ռեսթ» ՍՊԸ՝**

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - ***բավարարում է***

բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան - ***բավարարում է***

գ/ գնային առաջարկը կազմված և ներկայացված է սահմանված պահանջներին համապատասխան - ***բավարարում է***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

- **«Հոթել Աղվերան» ՓԲԸ-ի ներկայացրած՝**

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան – ***բավարարում է***

բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան – ***բավարարում է***

գ/ գնային առաջարկը կազմված և ներկայացված է սահմանված պահանջների համապատասխան – ***չի բավարարում***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

4. Ներկայացվեցին մասնակիցների առաջարկած գինը.

ա/«Դրիմ Ռեսթ» ՍՊԸ՝ 2900000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինն առանց ԱԱՀ՝ 2416667 (երկու միլիոն չորս հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ:

բ/ «Հոթել Աղվերան» ՓԲԸ՝ 2988000 (երկու միլիոն ինը հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինն առանց ԱԱՀ՝ 2490000 (երկու միլիոն չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

5. Հանձնաժողովը որոշեց մերժել «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«Դրիմ Ռեսթ» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

7. Հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև

«ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

8. Հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 29.04.2016թ. ժամը 18:00 ներառյալ) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/2 հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

9. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2016թ.մայիսի 2-ին ժամը՝ 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովը նախագահող՝		Ա. Պողոսյան
անդամներ՝		Ա. Կուլախսզյան
		Հ. Իփեքչյան
քարտուղար՝		Լ. Գևորգյան